

կանեւով անոր սրբազան աւանդու-
թիւններն ու շնաշխարհիկ հայրենա-
ւանդ կարգերն ու կանոնները , չկա-
րաց ժուժել իւր սրտին մէջ , առաւ-
իւր սքանչելի գրիչը ձեռքը ու սկը-
սաւ գրել առ աշակերտն իւր ապրու-
տամբ՝ Յովհան Վռնեցին , յանդիմա-
նելով զինքը արդար բարկութեամբ
և աստուածային նախանձով վա-
ռեալ , որպէս զի ձեռնթափ լինի իւր
յառաջադիր՝ գործքէն , և քաջէ իւր
ձեռքը անմեղ Լիկեղեցւոյն վերայ յա-
ւիտենական արատ մի բերելէ , որոյ
համար երբէք չսխալի արդարանայ
ապագայ սերնդեան առջեւը , զեկե-
ղեցին Լուսաւորչի երկրիեզիկելուն և
մշտնջենաւոր կազ ու վէճ՝ ձգելուն
համար ազգային ամբողջութեանը
մէջ . ինչպէս և նոյն իսկ ժամանակին
սկսած էին թէ՛ ի մեծն Հայոս և թէ՛
ի Լիլիկիա Յակոբ Բ . Կաթողիկոսին
օրովը մեծ անկարգութիւն և կրօ-
նական վէճեր ծագել : Լսայի վար-
ժապետ իւր յանդիմանական գրու-
թեամբը իմացուց անոր նաև Հայոց
Լիկեղեցւոյն ուղղափառութիւնը և
ամբիժ դաւանութիւնը , յորդորելով
զՎռնեցին՝ որ ինչպէս Լիկեղեցւոյն
վրդովմանը , նոյնպէս դարձեալ ինքը
սպտածառ ըլլայ անոր խաղաղութեւ ,
մէկգի իսկելով չար օրոմները՝ զոր
Բարթողիմէոս լատին վարդապետին
գործակցութեամբը սերմանած էր :

Պատմութիւնը մեզ կը սովորեցը-
նէ , թէ Լսայի վարժապետին հոգե-
շունչ իրատներն և հայրական աղ-
դարարութիւնները բոլորովին անօ-
գուտ եղան ընդդէմ Վռնեցւոյն և
իւր ընկերակցացը յամառ մտացն ու
խցեալ ականջաց , որոնց և ոչ Լեւո-
նի իշխանասաստ սպառնալիքներն ու
գաւազանը զօրեցին դիժ մի անգամ
շեղիլ տալ իրենց ապստամբ մօրքէն :

Ի յաջորդն :

Աղաք Բարոյականութիւն :

Լւրդալիոյ , մանաւանդ Վաղղիոյ
եկեղեցական և աշխարհական գիտ-
նոց մէջ կարծեաց և վարդապետու-
թեանց մասին որքան մեծ տարբե-
րութիւն ըլլալը մեր ուսումնական
ընթերցողաց շատին անծանօթ չէ :
Լիկեղեցականք ամէն ուսմանց և գի-
տութեանց մայր և դայեակ Լիկեղե-
ցին կ'ընդունին և սուրբ Վրոց վար-
դապետութենէ երբէք չեն շեղիր ,
իմաստասիրական խնդրոց լուծումը
որչափ որ հնար է՝ կը ջանան սուրբ
Վրոց համաձայն վարդապետութիւն մի
տալ : Իսկ աշխարհականք բոլորովին
հակառակը կ'ընդունին , այսինքն որ
և է ինդիր մի թէ՛ բնական իմաստա-
սիրութեան և թէ՛ բարոյական իմաս-
տասիրութեան վերաբերեալ ըլլայ ,
իրենց իմացական լուսովն և առաջ-
նորդութեամբ բանին կ'ուզեն լու-
ծել :

Սոտերս Աղաք բարոյականութիւն
անուամբ յօդուած մի հրատարակ-
ուեցաւ Վաղղիոյ քանի մի աշխար-
հական Լրագրաց մէջ , և որովհետեւ
այս յօդուածին վարդապետութիւնը
կրնար զաւկի տէր մարդոց վնասել
իրենց զաւակաց բարոյականութիւնը
վտանգի մէջ դնելով , եկեղեցական
խմբագիր մի սկսաւ պատասխանել
յիշեալ յօդուածին և զգուշացնել
ընտանեաց տէրերը նոյն վարդապե-
տութեան սկզբունքներուն դէմ :
« Ի՞նչ է այս Բարոյականութեան
զանազանութիւնը , կը հարցնէ ե-
կեղեցականը , որոյ անունը աղաք դը-
րած է » : Լս պատասխանը նոյն հա-
կառակորդ խմբագրէն քաղելով այս-
պէս կ'ըսէ . « Աշխարհիկ գիտութիւն
մի է ազնուութեամբ , որ չունի և
չկրնար կրօնական որ և է եւթագ-

րութեանց և կարծեաց հետ հասա-
րակ բան մի ունենալ : Ասկէ կը մա-
կաբերէ եկեղեցականը՝ թէ աշխարհա-
կան գիտութիւն ըսելը կղերականներու
շփեալութեամբ գիտութիւն մի կ'ուզէ
հասկըցընել : « Եւ ի՞նչ բանի մէջ կը
կայանայ այս բարոյականը, կ'ըսէ, որ
ամենեւին, կրօնական կարծեաց հետ
չմիաբանիր » :

Այնք առանց դատաւոր նստելու
երկու կարծեաց մէջ տեղը, մի միայն
մեր ընթերցողաց գաղափար մի տա-
լու համար ճշմարիտ բարոյականու-
թեան վերայ եկեղեցական հեղինա-
կին ունեցած կարծիքները մէջ կը
բերեմք, որոնք կրնան լաւ նշմարուիլ
իւր վիճաբանական յօդուածին մէջ :
« Աւրեմն այդ կերպ սահմանելովդ,
կ'ըսէ, պէտք է իմանամք բարւոյն
ու չարին բնազդեցական ծանօթու-
թիւնը, այն քանի մի պարտաւորու-
թիւններու ներքին իմացումը որ տը-
ղուն սրտին մէջ դրոշմուած է ըստ
չափու անոր մեծանալուն : Բայց եւ
թէ այդ է անկախ կամ ազատ բարոյ-
ականութիւնը, հարկ չկայ զայն սոր-
վեցընելու, և բոլորովին անօգուտ է
ատոր վերայօք յօդուածներ և գրքեր
հրատարակել՝ սորվեցընելու համար
մարդկութեան ինչ որ ինքն իւր
ընդթեմէն գիտէ » : Եւ որովհե-
տեւ Աիւլը լրագիրը, (այս է մեր
եկեղեցականին հակառակորդը,) կը
սնդէ թէ Տէրութեան ուսումնա-
րանաց աշակերտներուն հարկ է բա-
րոյական դաստիարակութիւն դաս-
տալ և կրօնականը զանց առնել, կ'ա-
ռարկէ իրեն կղերը, թէ « գործնա-
կանին մէջ միթէ անհնարին չէ՞ անի-
կայ : Արմէնք են ապաքէն ազատ բա-
րոյականութեան սահմանները, զայն
դաս տուող վարժապետը ի՞նչ հի-
ման վերայ պիտի հաստատէ զանի-

կայ. սոյն աշխարհական գիտութեան
վերաբերեալ գաղափարական օրի-
նակները ուսկէ՞ պիտի գտնէ, երբ
կը պարտաւորի այն գիտութիւնը
կրօնական բոլոր կարծիքներէ հեռու
պահել : Այս գիտութիւնը, ազատ
խորհող լրագիրներն ալ հետեւինին
առնելով՝ պիտի կարենան սահմա-
նել : Այնմէն գտնէ գրուածք մի մէջ
բերել ի վկայութիւն, որոյ մէջ ի-
րենց հասկըցածին պէս սահմանուած
ըլլայ : Եւ այս բանիս արդէօք Աիւլե-
րոնի Ա. Կարգոյ կոչուած գիրքը
հարկ է իբր օրինակատիպ ընդունել :
Բայց նայինք կրնայ ըսուիլ թէ հե-
թանոս փիլիսոփային այս գիրքը զուտ
բարոյական է, և անոր իմացումնե-
րուն մէջ կրօնական գաղափարներ
չկան : Ի՞նչ պիտի ըլլան արդի այն
բարոյագէտներն, որոնք տկամայ և
յանգէտս շատ անգամ հմտացած են
Աւետարանին սկզբունքներուն : Այն
և ապերախտ մարդիկներ, որոնք քրիս-
տոնէական կրօնիս յայտնութիւննե-
րէն ընդունելով իրենց վարդապե-
տութեանցը մէջ եղած բոլոր այն
վսեմ և սուրբ գաղափարները, կը
ջանան մինչեւ Աստուծոյ գաղափարն
անգամ կարծեաց և ենթադրու-
թեանց իշխանութեանը տակ ձգել :

« Իւրիւն է նախատեսել ազատ
բարոյականութեան դասին ինչ ըլլա-
լը, զոր մեր փիլիսոփաները մայր
գաղափարաց մէջ հաստատուել կ'ուզեն
կրօնական դաստիարակութեան դա-
սուն տեղը : Այսպէսպէտը այսպիսի
դասախօսութեան յատուկ հիմն ըլ-
լալիք վարդապետական մարմին մի չը
գտնելով, պիտի հարկադրի անտա-
րակոյս իւր մտքէն ըստ հաճոյից բան
մի ստեղծել ու անոր վերայ հիմնել
իւր դասերը : Այսպէս իրեն բուն
ներշնչութեանցը անձնատուր ըլլա-

լով՝ իրեն գործածութեանը լաւ սե-
պած որ և է բարոյականութիւնը
պիտի ուսուցանէ աշակերտացը : Բա-
ւական չէ՞ր արդեօք աշխարհական
սովորաբար մի յարմարելու համար մի
միայն պատուով ապրիլ սորվեցընել
անոնց : Բայց պատուաւոր մարդ ըլ-
լալու համար եւս քանի՞ քանի եղա-
նակներ կան :

» Անթիւ առարկութեանց մէջ
աչքի զարնող ուրիշ առարկութիւն
մի եւս կայ : Աիէ՛՛՛՛՛՛՛ կը պահանջէ որ
Տէրութիւնը իւր դպրոցներուն ա-
շակերտաց ազատ բարոյականը սոր-
վեցընէ . ասիկայ յայտնապէս անոր
համար է , որ տղաքը անոնց այս ուս-
մունքէն շահուելով՝ բարոյագէտ քա-
ղաքացիներ ըլլան , ինչպէս կ'ըսէ յի-
շեալ լրագիրը :

» Արդ , ի՞նչ ազդեցութիւն կ'ըր-
նայ ունենալ այն ուսմունքը որ բնաւ
սկզբունքի մի վերայ հիմնուած չէ .
ի՞նչ արժէք ունի այն օրէնքը՝ որ ոչ
իւր հաստատութիւնն ունի և ոչ օ-
րինադիրը : Անօգուտ է տղու մի քա-
րողել համեստութեան և բնական ա-
ռաքինութեան այս մեկնութիւն չու-
նեցող ճապաղ տեսականութիւնը ,
թէ որ անոր խիղճը ուրիշ տեղէ մի
լոյս չընդունի , և թէ որ ընտանեաց
դասերն և օրինակները այս տեսակ
կրթութեան մի դրութեան գէմ չը
կենան , պարտուց բնութիւնը ինք-
նին կը տկարանայ , և կրից ձայնը ա-
ւելի ճողով և համոզիչ կ'երեւի ի-
րեն քան զիւր վարժապետաց գեղե-
ցիկ ոճերը : Արեւելի գիտնական ե-
կեղեցականին մէկը իրաւամբք ըսած
է ուրեմն , թէ Ար բարոյականը զօ-
րաւոր կրնայ ըլլալ , երբ բովանդակ
բարոյականութեան հիմունքն ու հաս-
տատութիւնը կործանած են :

Ի յաջորդն :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Այսուսաղէմ իբրեւ քաղաք՝ հին
և նոր պատմութեանց , և իբրեւ վայր
յորում իւր հիմնարկութենէն ի վեր
զանազան նուիրական խորհրդոց տե-
ղի եղած է և լեցուն է սրբազան ա-
ւանդութիւններով , վասն որոյ թէ՛
քրիստոնեայ և թէ՛ անքրիստոնեայ
ճանապարհորդներու պայմանատեղի
եղած և բոլոր ազամածին որդւոց
մասնաւոր յարգանացն և կամ գէթ
անոնց հետաքրքրութեան տեղի հա-
մարուած է : Վասն որոյ ի սկզբանէ
ի վեր թէպէտ և երեւելի մարդկանց
և իմաստուն արանց ժամանակ ժա-
մանակ պարզ այցելութեան և կամ
բարեպաշտական նպատակաւ զսուրբ
Քաղաքը պատուելին նշանակուած
կրն պատմութեանց մէջ , սակայն այս
մօտ տարիներս անոնց թիւը յաճա-
խելով , արժանի համարած եմք ամ-
սաթերթիս միջոցաւ յիշատակել ա-
նոնց այցելութիւնները :

Այցեալ տարւոյս երեւելի ճանա-
պարհորդաց մէջ նշանաւոր էր Անգ-
ղիոյ Վիհապառ (Պապուհալոյն որդին
Արթուր ծաղկահասակ իշխանը , որ
իւր դատօրարակին և քանի մի երե-
ւելի անձինքներու հետ եկաւ , ծրու-
տեալ կերպով չըջեցաւ թէ՛ սուրբ
Քաղաքիս մէջ և թէ արտաքոյ եղած
սուրբ տեղերը , վասն որոյ իւր թա-
գաւորազն անձին արժանաւոր պա-
տիւը չուղեց ընդունիլ կառավարու-
թեան կողմէն : Արտի 13 ին եկաւ ,
ու քանի մի օրէն յետոյ մեկնեցաւ ի
Յորդանան :

— Հոկտեմբեր 5 ին եկաւ ի սուրբ
Քաղաքս Վամասկոսի նախորդ կու-
սակալ Շիրուանի — զատէ Ահմէտ
Իւշտիւ փաշայն , մի միայն բարե-
պաշտական այցելութիւն մատուցա-